ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2016 թ. դեկտեմբերի 16 **N 164-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՐՍԵՂ ՀԵԲՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N337-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 738.72 հա արոտավայրերից վարձակալության իրավունքով օգտագործման է տրամադրված ընդամենը 20.0 հա, իսկ մնացած մասը փաստացի օգտագործվում է համայնքի բնակիչների կողմից առանց վարձակալության պայմանագրեր կնքելու և որոնց համար վարձավճարներ չեն գանձվում:

Խախտվել են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9} և 56^{1}-րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ ե մ.**

1. Իրինդ համայնքի ղեկավար Բարսեղ Հեբոյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ **հարյուր հազար դրամ,** որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ 900005243119 հաշվեհամարին:

2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Իրինդ համայնքի ղեկավար Բարսեղ Հեբոյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Իրինդ համայնքի ղեկավար Բարսեղ Հեբոյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆ